ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆ ՀԱՅԿ ԱԼՈՒՄՅԱՆԻ «ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ

20.12.2013 09:46

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը և նախագահի տեղակալ Մելանյա Առուստամյանը այսօր՝ դեկտեմբերի 20-ին, մասնակցել են փաստաբան Հայկ Ալումյանի ‘Դատավարական հմտություններ’ ուսումնական ձեռնարկի շնորհանդեսին:

Պալատի նախագահ Արա Զոհրաբյանը ողջունել է ձեռնարկը լույս ընծայելու նախաձեռնությունը և նշել, որ «շատ օրինակելի է, որ Հայկ Ալումյանը որպես փորձառու փաստաբան համաձայնվել է կիսել իր փորձը: Ձեռնարկն իր բնույթով ունի ուսումնական և գործնական նշանակություն»:

Պետք է նշել, որ ավելի վաղ փաստաբանների պալատի նախագահը գրավոր կարծիք է տվել ձեռնարկի վերաբերյալ՝ նշելով, որ «ձեռնարկը կհամալրի հատկապես քրեական արդարադատությամբ զբաղվող փաստաբանների գրադարանները: Աշխատության մեջ ներկայացվել են քրեական դատավարության տարբեր փուլերում՝ մինչդատական վարույթում, առաջին ատյանի դատարանում, վերաքննիչ, վճռաբեկ դատարաններում, ինչպես նաև սահմանադրական դատարանում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանում փաստաբանի գործողությունների, ինչպես նաև դատավարական փաստաթղթերի կազմման մարտավարության հիմնական դրույթները»: Միջոցառմանը մասնակցել են ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ Լիպարիտ Սիմոնյանը, Փաստաբան Արա Զաքարյանը և հայաստանյան տարբեր բուհերի իրավաբանական ֆակուլտետների ներկայացուցիչներ:

Նշենք, որ փաստաբան Հայկ Ալումյանի ‘Դատավարական հմտություններ’ ուսումնական ձեռնարկը հրատարակվել է Ամերիկյան իրավաբանների ընկերակցության CEELI, INC.-ի Հայաստանյան ներկայացուցչության աջակցությամբ:

Նախորդ նորությունը: ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ ՍԵԴՐԱԿ ԱՍԱՏՐՅԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍԸ

Հաջորդ նորությունը: ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱՄԵՆԱՏԱՐԵՑ ՓԱՍՏԱԲԱՆԸ 90 ՏԱՐԵԿԱՆ Է

Առաջարկվող նորություններ

22.11.2013ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱԿՈՒՄԲՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

26.11.2013ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԱՌԿԱ ԵՆ ԱՅՆՊԻՍԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ, ՈՐՈՆՔ ՎՏԱՆԳԵԼՈՒ ԵՆ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ և ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

27.11.2013ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ

03.12.2013ԱՐՄԵՆ ԵՍԱՅԱՆԸ ԿՄԵԿՆԻ ՌՈՒՄԻՆԻԱ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })